



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՑԻ

630 SECOND AVENUE, NEW YORK 16, N.Y.

MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 5034

Փետրուար 18, 1963

Արժանաշնորհ

Տ. Առնակ Ջէնյ. Գասպարեան

Հոգեւոր Հովիւ Պրբկըն Բառնդիի Համայնքի
եւ Նախագահ Պատուարժան Միսկան Խորհուրդի
Քլասթըր.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք 1963 Փետրուար 13 թուակիր Ձեր տեղեկագիրը.
որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 3ին, գու-
ժարուած Տարեկան Միսկան ժողովը կատարած է Միսկան Խորհուրդի
ժամանակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւն-
քը. կը խնդրէք ընտրուած անձներուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմա-
կան Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն եւ ընտրութիւնը
կատարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝
իբրեւ անդամ Միսկան Խորհուրդին.

Տիարք՝ Թիշ Պասմանեան
Զաւէն Հալահեան
Պերն Գալուստեան
Ճան Գրուսեան
Ճէք Հահիւնեան
Մարք Զուգասեան

Կը յանձնարարենք որ Ձեր Միսկան Խորհուրդի նոր զիւանի
կազմի անուն-հասցէները Առաջնորդարան ղրկէք փութով:

Օրհնելով Միսկան Խորհուրդի նոր կազմը՝ կը մաղթենք ձե-
զի յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան շրջան մը, ի պայծառու-
թիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սի-
րեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի